ԱՐԻՆ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Մանվել Ավետիսյան

Հեռախոս՝ +374. 93811980

Արին համայնքը գտնվում է Վայոց ձորի մարզի վարչական տարածքում, մարզկենտրոնից 25 կմ հեռավորության վրա. դեպի հարավ-արևելք, ծովի մակերևույթից 1450 մ բարձրության վրա: Հյուսիս արևելքից սահմանակից է Հերհեր, հյուսիս արևմուտքից՝ Մալիշկա, հարավից՝ Ազատեկ գյուղերի հանդամասերին: Արինից 3կմ դեպի հյուսից-արևելք գտնվում է հրաբխային կենտրոն Դալի թափան, որի հետևանքով 735 թվականին կործանվել է Մոզ քաղաքը:

Բնակավայրում աշունը երկարատև է, իսկ ձմեռը՝ ցուրտ ու քամոտ, որը տևում է 3.5-4 ամիս: Գյուղի և տարածքի անվան մասին նախնիներից փոխանցվել ու մեզ է հասել հետևյալ պատմությունը. Գյուղի տարածքով անցնող մի նշանավոր հայ անձնավորություն, տեսնելով ձիերի երամակը, զամբիկների հետևից եկող քուռակների խաղը, հիացել ու ասել է. «Ինչ լավ քուռկախաղ է»: Ու քանի որ այդ ժամանակ ձիու նկատմամբ պաշտամունք է եղել, բնակիչներն այդ տարածքը կոչել են Քուռկախաղաց տեղեր: Հետագայում, հավանաբար 1604 թվականին, Արին համայնքը վերաբնակեցվել է նաև այլազգիներով, որոնք Քուռկախաղաց անունն իրենց լեզվով վերանվանել են Դայլախլու:

Հնագույն հուշարձաններից է Սուլթանի քարայրը: Քարայրի ավերակների մեջ նկատվում են երկու պարիսպներ՝ բոլորաձև՝ 3-4 արշին բարձրությամբ: Գտնվել են հղկված քարի մնացորդներ, քարե դարի ժամանակվա իրեր ու առարկաներ: Դա ևս վկայում է այն մասին, որ Արին գյուղը, որպես բնակավայր գոյություն է ունեցել դեռևս քարե դարից: Այն կրկին վերաբնակեցվել է 19-րդ դարի 80-ական թվականներին, Ազատեկից Արին տեղափոխված մի քանի ընտանիքների կողմից:

Արինում կառուցվել է Արցախյան պատերազմներում նահատակված մերօրյա հերոսների հիշատակը հավերժացնող հուշակոթող:

Գյուղին է պատկանում Հերհերի ջրամբարը՝ 74 մետր խորությամբ: Գյուղն ունի դպրոց և բուժկետ: Բնակչությունը հիմնականում զբաղվում է այգեգործությամբ, մեղվապահությամբ և անասնապահությամբ:

Գյուղից պարզ տեսանելի է Արարատ լեռն իր Սիս և Մասիս գագաթներով: